


« ԷՔՍՊԵՐՏ ՄԵԿ » ՍՊԸ

ԼԻՑԵՆԶԻԱ 15455

« ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ »

ՏՆՕՐԵՆ

 Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



« 10 » 05 2016թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 25 - րդ փողոցի հ. 4 հասցեում
Ամասիայի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի
վերակառուցման նախագծի մասին

Կառուցապատող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ
ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական
ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ

Նախագծող՝ « ՆՈՐԱՇԵՆ » ՆՏ ԱԿ

Նախագծման հիմքը՝ Ամասիա համայնքի ղեկավարի կողմից տրված 12.01.2016թ.
հ. 01 նախագծման թույլտվությունը

Ճարտարապետական մաս

Նախագծով նախատեսվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի 25-րդ փողոցի հ. 4 հասցեում Ամասիայի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի մասնաշենք վերակառուցման ու տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում: Տարածքում առկա են քանդման ենթակա ավտոտնակ, վերանորոգման ենթակա պարիսպ: Հողամասին կից գտնվում են փողոցներ, հարևան բնակելի և հասարակական նշանակության կառույցների տարածքներ: Տրանսպորտային պայմաններն ապահովվում են 25-րդ փողոցով, ներթափային ճանապարհով:

Վերակառուցման նախագիծը ներառում է ներքին շինարարական աշխատանքների, շենքի հիմնանորոգման, հարկերի վերահատակագծման, հարդարման, ներքին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՔՍՊԵՐՏ ՍԵԿ»



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ
ОТВЕТСТВЕННОСТЬЮ

«ЭКСПЕРТ МЕК»

Երևան, Արցախի 6-52

Հեռ. (+374 93) 38 35 60
Թեղ. Երևան, Արցախի 6-52

Երևան, Արցախի 6-52

№ Է-019

ԼԻՑԵՆԶԻԱ 15455

«10» 05 2016 թ.

Երևան

« ՆՈՐԱՇԵՆ » ՆՏ ԱԿ

Կից ուղարկվում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 25 - րդ փողոցի հ. 4 հասցեում Ամասիայի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի վերակառուցման նախագծի մասին փորձաքննության եզրակացությունը:

Առդիր՝ եզրակացությունը 6 էջից:

ՏՆՕՐԵՆ

Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ինժեներական ցանցերի վերանորոգման, հրդեհային և անվտանգության համակարգերի մոնիտինգի աշխատանքների իրականացումը, ինչպես նաև տարածքի բարեկարգումը, կանաչապատումը, առկա պարսպի վերանորոգումը և նոր պարսպի իրականացումը:

Վերակառուցման նախագծի համաձայն քանդվում է շենքի հետին ճակատին կից ավտոտնակը, ապամոնտաժվում են շենքի առաջին և երկրորդ հարկերի դռներն ու պատուհանները, բոլոր միջնորմները: Ապամոնտաժվում է տանիքը, իրականացվում է նոր լանջավոր տանիք՝ ցինկապատ ծալքաթիթեղի ծածկույթով, կազմակերպված ջրահեռացմամբ:

Առաջին հարկում իրականացվում են երկու նոր պատուհանի և մեկ դռան բացվածքներ, երկու հարկերում ներքին երկայնական պատի որոշ դռների բացվածքներ ընդլայնվում են՝ համապատասխան ամրացումներով:

Շենքի լայնական առանցքներով տեղադրվում են երկաթբետոնե շրջանակներ և դիաֆրագմաներ՝ կառույցի սեյսմազինվածության ավելացման նպատակով:

Հատակագծային լուծումներին համապատասխան իրականացվում են նոր միջնորմներ:

Դիմային ճակատի աջակողմյան հատվածում գտնվող շենքի գլխավոր մուտքի առջև իրականացվում է սյունազարդ կցակառույց - նախամուտք, որի երկու կողմերից նախատեսված են թեքուղիներ, իսկ շենքի առաջին հարկում նաև սանհանգույց՝ հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի սպասարկման համար:

Առաջին հարկում նախատեսված են նախասրահ, ընդունարան, խորհրդատվությունների սենյակ, ռեսուրս կենտրոն, դահլիճ, հետազոտման սենյակ, սանհանգույց:

Երկրորդ հարկում նախատեսված են աշխատասենյակներ, սերվեր, խոհանոց-ճաշատեղի, արխիվ, սանհանգույց:

Բոլոր պատուհանները և ներքին դռները պլաստմասայե պրոֆիլներով են:

Աշխատասենյակների հատակները լամինատից են, մնացած տարածքներինը՝ կերամոզրանիտից:

Սենյակների պատերը պատվում են լվացվող ներկածածկով: Սանհանգույցների պատերը երեսապատվում են կերամիկական սալիկներով: Սենյակներում նախատեսված են «Արմսթրոնգ» տիպի կախովի առաստաղներ:

Հարկերում հատակագծային լուծումները, սենյակների կազմը, քանակը և դասավորությունը մշակված են պատվիրատուի առաջադրանքի համապատասխան: Էսքիզային նախագիծը համաձայնեցված է պատվիրատուի հետ:

Կոնստրուկտորական մաս

Նախագծին կցված է վերը նշված հասցեի շենքի և կցակառույցի շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ «Հաբշին նախագիծ» ՍՊԸ կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, համաձայն որի շենքը երկու հարկանի է, քարե երեք երկայնական կրող և լայնական կապող պատերի սխեմայով, կառուցվել է 1980-ական թվականներին: Ցուկուր բազալտից է, արտաքին պատերը՝ սրբատաշ տուֆ քարից՝ 50 սմ հաստությամբ: Երկրորդ հարկում լայնական պատերը բացակայում են: Ծածկերը՝ հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերով: Տանիքը՝ փայտե ծալեղներով, ասբոշիֆերի ծածկույթով: Աստիճանը՝ հավաքովի երկաթբետոնից:

Ակնադիտական հետազոտումից պարզվել է, որ շենքի կրող և պատող կոնստրուկցիաներում առկա են ճաքեր: Շենքի կոնստրուկցիաները և պատերի սխեմաները ներկայումս գործող սեյսմիկ նորմերին չեն համապատասխանում: Բազալտե ցոկոլը տեղ-տեղ թափվել է: Եզրահանգման մեջ նշվում է, որ շենքի հետագա անվտանգ շահագործման համար անհրաժեշտ է բարձրացնել նրա սեյսմազինվածությունը: Բերված են անհրաժեշտ առաջարկներ և հանձնարարականներ:

Կառույցի արտաքին պատերն ուժեղացվում են 80 մմ հաստությամբ միակողմանի երկաթբետոնե շապիկներով (B15 դասի բետոն), ներքին պատերը՝ 50 մմ հաստությամբ երկկողմանի շապիկներով (տորկրետ M200 դասի շաղախով), որոնք ամրանավորվում են Ø 8 A500c դասի ձողերից պատրաստվող ցանցերով՝ 150 × 150 մմ քայլով: Միակողմանի շապիկների ցանցերն ամրակցվում են պատերին, իսկ երկկողմանի շապիկների ցանցերը միմյանց՝ Ø 10 A500c դասի խարսխաձողերով՝ 600 × 600 մմ քայլով:

« 2 » և « 3 » առանցքներով իրականացվում են միաձույլ երկաթբետոնե շրջանակներ և դիաֆրագմաներ, իսկ « 4 » առանցքով՝ դիաֆրագմա, որն ունի 200 մմ հաստություն: Դիաֆրագման ամրանավորվում է Ø 12 A500c դասի ձողերից պատրաստվող կրկնակի ցանցերով՝ 200 մմ ձողերի քայլով: Ցանցերի միջև տեղադրվում են Ø 6 Ac1 դասի գամասեղներ՝ 400 × 400 մմ քայլով: Ե/բ շրջանակի հիմքերը նախագծված են միաձույլ երկաթբետոնից, ժապավենների տեսքով, որոնք ունեն 600 × 600 մմ լայնական հատվածքի չափեր: Ամրանավորվում են Ø 16 A500c դասի երկայնական ձողերով և Ø 8 Ac1 դասի լայնական ամրաններով՝ 200 մմ քայլով: Հիմքերի տակ տեղադրվում է B15 դասի խամքարաբետոն մինչև գոյություն ունեցող շենքի հիմքերի նիշը: Կանգնակներն ունեն 400 × 500 և 400 × 400 մմ լայնական հատվածքի չափեր, ամրանավորվում են Ø 20 A500c դասի երկայնական ձողերով և Ø 8 Ac1 դասի լայնական ամրաններով՝ 200 մմ քայլով: Հեծաններն ունեն 400 × 550 և 400 × 400 մմ լայնական հատվածքի չափեր, ամրանավորվում են Ø 18 A500c դասի երկայնական ձողերով և Ø 8 Ac1 դասի լայնական ամրաններով՝ 150 մմ քայլով:

Ծածկերն ուժեղացվում են 50 մմ հաստությամբ միաձույլ ե/բ շերտով, որն ամրանավորվում է Ø 6 Ac1 դասի ձողերից պատրաստվող ցանցերով՝ 150 × 150 մմ քայլով: Ցանցերն ամրակցվում են գոյություն ունեցող ծածկի սալերին Ø 10 A500c դասի ձողերից պատրաստվող մետաղական կարկասով:

Պատերի վրա իրականացվող նոր գոտիներն ունեն 500 × 200, 480 × 200 և Ամրանավորվում են Ø 12 A500c դասի երկայնական ձողերով և Ø 6 Ac1 դասի լայնական ամրաններով՝ 200 մմ քայլով:

Նոր դռան բացվածքների համար իրականացվում են բարավորներ պողպատե շվեկերներից, որից հետո ապամոնտաժվում է պատի համապատասխան հատվածը: Ստացված բացվածքը գոտևորվում է միաձույլ ե/բ շրջակապով, որն ունի 500 × 250 և 500 × 300 մմ լայնական հատվածքի չափեր: Շրջակապն ամրանավորվում է Ø 16 A500c դասի երկայնական ձողերով և Ø 8 Ac1 դասի լայնական ամրաններով՝ 200 մմ քայլով:

Պատուհանների բացվածքների իրականացման համար ապամոնտաժվում է պատի համապատասխան հատվածը: Ստացված բացվածքը երիզվում է մետաղական շրջակապով: Վերջինս պատրաստվում է պողպատե անկյունակներից և թերթավոր պողպատից՝ եռակցմամբ: Շրջակապն ամրակցվում է պատերին Ø 10 A500c դասի խարսխաձողերով:

Աստիճանների պահպանվող մետաղական հեծանները լրացուցիչ ամրանավորվում են 6, 8, 12, 18 մմ տրամագծի Acl և A500c դասերի ձողերով:

Բոլոր միաձույլ երկաթբետոնե տարրերում բետոնի դասն ընդունված է B20:

Ինժեներական մաս

Վերակառուցվող շենքի ջրամատակարարման և կոյուղու ցանցերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի համաձայն: Արտաքին ջրագիծը միացվում է 25-րդ փողոցով անցնող $\varnothing 100$ մմ ջրատարին: Ջրագծի միացման տեղում, դիտահորի մեջ տեղադրվում է ջրաչափ: Նախատեսված է խմելու ջրի 500 լիտր տարողությամբ բաք երկրորդ հարկի սանհանգույցի առաստաղի տակ: Տաք ջրի աղբյուր է հանդիսանում երկրորդ հարկում նախատեսված կաթսայատունը: Ջրամատակարարման ցանցի համար ընտրված են 15 – 40 մմ տրամագծի պլաստմասայե խողովակներ, համապատասխան ձևավոր մասերով:

Կենցաղային կեղտաջրերը սան.սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով կոյուղու բակային ցանց, որը միացվում է տարածքով անցնող $\varnothing 300$ մմ կոյուղուն: Կոյուղագիծը նախատեսված է 50 - 100 մմ տրամագծի պլաստմասայե խողովակներից, համապատասխան ձևավոր մասերով:

Ջրագծի միացման հանգույցում և կոյուղագծի վրա նախատեսված են դիտահորեր:

Նախատեսված է նաև անկախ հակահրդեհային ցանց, համապատասխան ջրի բաքով:

Շենքի էլեկտրասնուցումն իրականացվում է հարակից տարածքում տեղակայված ենթակայանի 10 կՎ ուղղությունից սնվող ցածր լարման վահանից, որի համար նախագծված է պղնձե մալուխային գիծ, որը միանում է շենքի ներսում տեղադրված գլխավոր բաշխիչ վահանակին: Էլեկտրաէներգիայի ընդունումը և բաշխումը կատարվում են հարկային բաշխիչ վահաններից, որոնք տեղադրվում են էլ.վահանային սենյակներում: Շենքում տեղադրվում են 48 ավտոմատ անջատիչների համար նախատեսված բաշխիչ վահանակներ: Վարդակային ցանցը նախատեսված է երեք միաջիղ հաղորդալարերից, լուսավորության ցանցը՝ կրկնակի մեկուսացմամբ եռաջիղ հաղորդալարերից: Վարդակները տեղադրվում են հատակից 30 սմ բարձրության վրա: Հաղորդալարերի անցումը նախատեսված է մոնտաժային խողովակների միջով:

Շենքի համար նախագծված է հողանցման համակարգ: Հողանցումն իրականացվում է արտաքին և ներքին հողանցման կոնտուրներով: Արտաքին կոնտուրում նախատեսված են 40×4 մմ կտրվածքի շերտապողպատից հորիզոնական հողանցիչներ և 5 մ երկարությամբ, $63 \times 63 \times 5$ մմ կտրվածքի պողպատե անկյունակներից ուղղահայաց հողանցիչներ: Ներքին կոնտուրը նախատեսված է մալուխային հորանների միջով, պատից ամրացնելով, իրականացվում է 40×4 մմ կտրվածքի շերտապողպատից: Որպես բնական հողանցիչ օգտագործվում է հողի մեջ տեղադրված ջրագծերի մետաղական խողովակաշարը:

Շենքում նախագծված են ջեռուցման երկու անհատական համակարգեր՝ առաջին և երկրորդ հարկերի համար: Համակարգերն ընդունված են հորիզոնական, ստորին մատակարարմամբ, ջրի համընթաց շարժմամբ: Որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում են պատի գազային երկկոնտուրանի տուրբո կաթսաները: Մատակարար և հետադարձ խողովակներն անցկացվում են շրիշակների վրայով: Որպես ջեռուցման սարքեր

նախատեսված են այլումինե մարտկոցներ: Ջեռուցման ցանցի համար ընտրված են 15 – 32 մմ տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներ:

Օդափոխության համար շենքում նախատեսված են բնական և արհեստական արտածման համակարգեր, ներածումը կատարվում է բնական եղանակով: Խոհանոցում, կաթսայատանը, սերվերի սենյակում տեղադրվում են օդափոխիչներ: Արտածման համակարգերի օդատարները թողնվում են տանիքի տակ, բարձրացվում են 0,7 մ և փակվում ցանցով: Կաթսայատան համար նախատեսված է ներածման հորան, որը բարձրացվում է տանիքից 3,3 մ վեր: Օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից:

Շենքի ջրատաքացուցիչ կաթսաների գազատարի միացումն իրականացվում է գոյություն ունեցող 159 մմ տրամագծի վերգետնյա ցածր ճնշման գազատարից: Սահմանազատման կետում տեղադրվում է գազի հաշվիչ հանգույց: Գազատարի մոնտաժն իրականացվում է պողպատե ջրագազատար խողովակներով:

Նախագծով նախատեսված են հակահրդեհային անվտանգության, պահպանության ազդանշանային համակարգերի իրականացում:

Հակահրդեհային և պահպանության համակարգերի հսկումն ու ղեկավարումն իրականացվում են 20 ազդանշանային շղթայով հսկման - ղեկավարման սարքի միջոցով, որը տեղակայված է ընդունարանում: Հրդեհի դեպքում համակարգն ապահովում է տարհանման ազդարարում լուսաձայնային ազդարարների միջոցով: Տարածքները հսկվում են ծխային և ջերմային ազդասարքերով: Պահպանվող տարածքները հսկվում են մագնիսական տակտային տվիչներով, ապակու կտրման և շարժման տվիչներով:

Նախագծով նախատեսված են նաև համակարգչային, հեռախոսային և հեռուստատեսային ցանցերի իրականացում: Համակարգչային ցանցի լարանցումը նախատեսված է մալուխներով՝ սերվերային սենյակ – միջանցք – աշխատասենյակ ճանապարհով, միջհարկային ծածկի և կախովի առաստաղի միջև նախատեսված կանալների միջով: Վարդակներն ամրացվում են շրիշակի բարձրության վրա տեղակայված լարանցման կանալի վրա: Պատին տեղակայված հեռուստացույցների, պրոյեկտորների և տեսահսկման սարքերի էլեկտրական սնուցման և ցանցային վարդակների լարանցումն իրականացվում է պաշտպանիչ զսպանակավոր խողովակով՝ կախովի առաստաղների վերևով:

Փորձաքննության է ներկայացված շենքի վերակառուցման շին. աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը՝ 193694,11 հազ. դրամ նախահաշվային արժեքով:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվը կազմված է օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն, 2015թ. գործող գներով:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. նորմերի գնահաշվարկով, կիրառելով ռուբլուց դրամ անցման հետևյալ գործակիցները՝
աշխատավարձի մասով 2078,43;

մեքենաների շահագործման մասով 2909,12:

Շին. նյութերի ծախսը վերցված է 1984թ. շին. նորմերից, նյութերի արժեքները՝ ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակված հ. 12 ինֆորմացիոն տեղեկագրից, կիրառելով հետևյալ տոկոսադրույթները՝

տրանսպորտային ծախսեր 8,8%;
պահեստավորման ծախսեր 2,0%;
այլ նյութեր 5,0% :

Նախահաշվում ուղղակի ծախսերի վրա հաշվարկված են 13.3 % վերադիր ծախսեր և 11.0% շահույթ:

Տեղային նախահաշիվների հիման վրա կազմված է հավաք նախահաշիվ՝ համապատասխան լիմիտավորված տոկոսադրույքներով:

Բոլոր ծախսերի վրա հաշվարկված է ավելացված արժեքի հարկ 20 %:

Տեղային նախահաշիվներում որոշ նյութերի և սարքավորումների արժեքներ վերցված են շուկայից կամ մատակարարող և աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների գնացուցակներից: Նշված նյութերի արժեքների համար շինարարության ընթացքում պետք է ներկայացվեն համապատասխան հաշիվ-ապրանքագներ և գները հիմնավորող փաստաթղթեր:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը, «ԷՔՍՊԵՐՏ ՄԵԿ» ՍՊԸ նշում է.

- Նախագիծը կատարված է եզրակացության հանձնարարականների համաձայն;
- Նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան;
- Շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների տեղային և հավաք նախահաշիվները կազմված են ՀՀ կառավարության 14. 07. 2011թ. 879-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: Նախահաշվային արժեքը կազմում է 193694,11 հազ.դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 32282,34 հազ.դրամ;
- Փորձաքննության ընթացքում նախագծա - նախահաշվային փաստաթղթերում հայտնաբերված թերություններն ու անճշտությունները վերացված են աշխատանքային կարգով:

Եզրակացություն. Նախագիծը երաշխավորվում է համաձայնեցման և հաստատման:

Փորձագետ  Մ.Մկրտչյան

Փորձագետ  Է. Մկրտչյան

Փորձագետ  Է. Թադևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌՅԵՆՔԻԱ

15455

(հիմնադրամատ)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹԱԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱԲԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌՅԱՌՈՒԹՅԱՆ ԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՎՈՐԹՅՈՒՆ ԶՊԱՅՆՔԻԱ (ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹԱԹԵՐԻ)

(գործունեության տարածք)

Տրվում է

«30 ՄԱՅԻՍԻ 2012թ.» «ԷՔՍՊԵՐՏ ՄԵԿ» ՍՊԸ Զ. ԵՐԵՎԱՆ, ԱՐՑՆՈՒԻ 6 Բ/Շ, ԲՆ.52

(իջեմզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումը ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը

ԱՆՃԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ



(ստորագրություն)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

(անուն, ազգանուն)